



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1016-Ա  
քաղ. երևան


**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ  
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի սեպտեմբերի 23-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (մեկ տեղ, 5.76 կգ ընդհանուր քաշով, 62.50 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՄԱԽԱԳԱԿ 

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1017 - Ա  
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱՅՈՒ ՍՈՒՐԸ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՅ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
«ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՄՈՒՏՔԻ ԴԱՐՊԱՍԻ, ՃԱՂԱԶԱՐԻ  
ՊԱՏՐԱՏՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԶԱՐԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 15-ի N 07/80-2/25823-15 և սեպտեմբերի 11-ի N06/3-3/25645-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 16-ի N 02/14/11214-15 եզրակացությունները, ո թ ռ ու մ է.


1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող 2,460,360 դրամ արժողությամբ «Արարատյան փողոցի մուտքի դարպասի, ճաղաչարի պատրաստում և տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Որոշման Գրիգորյան ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 52193855) 2015 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N 15Ը/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դրապասի և ճաղաչարի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,460,360 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հանրապետության արդարադատության նախարարություն:



**Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական կենտրոնում


Մուշեղ եպիսկոպոսի հարմարյան

« 7 » հոկտեմբեր 2015



**Արարատյան փողոցի մուտքի դարպասի, ճաղաչարի պատրաստում և տեղադրում  
Ծ Ր Ա Գ Ր**

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արարատյան փողոցի մուտքի դարպասի և ճաղաչարի պատրաստման ու տեղադրման աշխատանքները:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ՀՎՀՀ 06800406:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, բնագավառը՝ եկեղեցաշինություն:
6.	Ծրագրի բյուջեն	2,460,360 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործությունը ստացողը	Հայ Առաքելական Եկեղեցին, հոգևորականները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01 սեպտեմբեր 2015թ. – 20 հոկտեմբեր 2015թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արարատյան փողոցի մուտքի դարպասի և ճաղաչարի պատրաստում ու տեղադրում՝ 2,460,360 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է Որոշման Գրիգորյան ԱԶ-ի կողմից (ՀՎՀՀ 52193855)՝ պայմանագիր կնքված 01.09.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 01 սեպտեմբեր 2015թ. – 20 հոկտեմբեր 2015թ.:
10.	Չեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արարատյան մուտքի դարպասի և ճաղաչարի պատրաստում ու տեղադրում՝ 2,460,360 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ ճարտարապետաշինարարական բաժնի կողմից: Ծրագրի բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1018 - Ա  
քաղ. երևան

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/26732-15 և սեպտեմբերի 18-ի N 06/3-3/26518-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված լուսարձարկների (245 կգ ընդհանուր քաշով, 11,151 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Գարեգին Ա կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱՐԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1019 - Ա  
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/26731-15 և սեպտեմբերի 18-ի N 06/3-3/26432-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված գրանիտե արտադրանքի (19 տեղ, 25,800 կգ ընդհանուր քաշով, 33,990 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 999,375 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Էջրնեկեան վարժարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԻ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1020 - Ա  
քաղ. Երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՅԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 24-ի N 07/80-2/27308-15 և սեպտեմբերի 23-ի N 06/3-3/26895-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված լուսատուների (4 տեղ, 1,000 կգ ընդհանուր քաշով, 53,598 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Գարեգին Ա կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԿ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

	<p>02</p>	<p>գերատեսչությունների՝ պետական մարմինների, Հասարակական կազմակերպությունների և ՄԱԿ-ի համապատասխան գրասենյակների միջև համագործակցությունը ընդլայնվել է, 4. Համայնքային մակարդակում ԱՌՆ վերաբերյալ գործառնական գիտելիքները և</p>
--	-----------	--



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1021 - Ա  
քաղ. երևան


ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՅԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N 07/80-2/25517-15 և սեպտեմբերի 11-ի N 06/3-3/25602-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված պարաֆինի (935 տեղ, 22,920 կգ ընդհանուր քաշով, 38,843.69 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է ծիսական մոմի արտադրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1022 - Ա  
քաղ. Երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-816-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ  
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 24-ի N 07/80-2/27310-15 և սեպտեմբերի 22-ի N 06/3-3/26830-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 27-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցք՝ ճանապարհային անվտանգության 2-րդ ծրագիր (TRACECA)» ծրագրի մասին» N Մ-816-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՆԱՐԵԿ ՏԱԹԵՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03012065) 2015 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 1,195,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2 սեպտեմբերի 2015 թվականի N Մ- 1023 - Ա  
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N Մ-431-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ  
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 07/80-2/27454-15 և սեպտեմբերի 23-ի N 06/3-3/26897-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 5-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Սոցիալ հոգեբանական աջակցություն երեխաներին և միայնակ փախստական ծերերին» N Մ-431-Ա (2015 թվականի հունիսի 12-ի N Մ-612-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սիֆիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2015 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ռեգուլյար» տեսակի բենզինի ձեռքբերում՝ 328,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



**Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1024 -Ա  
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N Մ-065-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 07/80-2/27453-15 և սեպտեմբերի 22-ի N 06/3-3/26867-15 եզրակացությունները, հաշվի առնելով Հայկական կարմիր խաչի ընկերության 2015 թվականի սեպտեմբերի 18-ի N 513 գրությունը, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցելք անվտանգ և կայուն համայնքներ» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-065-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) որոշման 1-ին կետի «283.500 եվրո արժողությամբ» բառերը փոխարինել «270,000 եվրո արժողությամբ» բառերով.
- 2) որոշմանը կից ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Սույն որոշումն հիմնված է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Բ՝  
Հայկական կարմիր խաչի ընկերության  
տնօրենի Աննա Եղիազարյանի կողմից  
28.09.2015թ.

( Կ ա ռ ո յ յ ն ք ա ն վ տ ա ն գ և կ ա յ ու ն հ ը ն յ լ յ ն ք Ե Ր Վ Ա Ր Ի )

1. Ծրագրի նպատակը	Նվազեցնել գյուղական և քաղաքային համայնքների բնաչլության խոցելիությունը աղետների նկատմամբ Հայաստանում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	«Ք Օ Ր Ն Ե Ք Ն Ե Ր Վ Ի Կ ա ռ ո յ յ ն ք ա ն վ տ ա ն գ և կ ա յ ու ն հ ը ն յ լ յ ն ք Ե Ր Վ Ա Ր Ի ն ն պատկերով օգտվելու նպատակով:
3. Բարեգործը	Ավստրիայի զարգացման գործակալությունը և Ավստրիական կարմիր խաչի ընկերությունը
4. Ծրագիրը կատարողը	Հայկական կարմիր խաչի ընկերություն: Պարտնյալ 21/7, ՀՀՀՀ 00006023
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Երևան և Լոռու: մարզի գյուղական և քաղաքային համայնքներ:
6. Ծրագրի բյուջեն	Աղետների ռիսկի նվազեցման բնագավառ: 270.000 Եվրո - արտաք ՍԱԿ
7. Բարեգործություն ստացողը	Երևան, Վանաձոր և Ստեփանավան քաղաքների և Լոռու մարզի 4 գյուղական համայնքների բնաչլությունը: Հանայնքների ընտրությունը կատարվելու է Լոռու մարզային իշխանության և մարզային Փրկարար ծառայության հետ համատեղ հաշվի առնելով համայնքների՝ աղետների նկատմամբ ռիսկը, աղետների կրկնման համախալանությունը և հայրուցյալ վնասները:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	01 հեկտեմբեր 2012 – 30 Դեկտեմբեր 2015
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Թրագրի ունի հետևյալ ակնկալվող արդյունքները՝ կարողությունները ընդլայնվել են: Հանայնքների կարողությունների զարգացում, 2. Քաղաքային համայնքների պատրաստվածության և արձագանքման կարողությունները ընդլայնվել են, 3. Ազգային մակարդակով կարմիր խաչի ընկերությունների և արտաքին գերատեսչությունների՝ պետական մարմինների, Հասարակական կազմակերպությունների և ՄԱԿ-ի համապատասխան գրասենյակների միջև համագործակցությունը ընդլայնվել է, 4. Համայնքային մակարդակում ԱՌԽ վերաբերյալ գործառնական գիտելիքները և

12/10.2

փորձի փոխանակման կարողությունները ամրապնդվել են, և Համայնքային մակարդակում ԱՌՆ ոլորտը հանդիսանում է ԿՄ/ԿՄ ազգային ռազմավարության կարևոր դրույթներից մեկը:

Ծրագրի շրջանակներում ըստ ակնկալվող արդյունքների նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝

Ակնկալվող արդյունք 1

- 1.1. Մասնակցային Աղետների նկատմամբ խոցելիության և կարողությունների գնահատման իրականացում 4 թիրախային գյուղական համայնքներում /բյուջեն 8.162 եվրո, ժամանակահատված՝ 01.02.2013թ.- 31.07.2014թ./:
- 1.2. ԽԿԳ զեկույցի և ԱՆԿ Գործողությունների պլանի մշակում յուրաքանչյուր թիրախ համայնքի համար /բյուջեն 2.870 եվրո, ժամանակահատված՝ 01.04.2013թ.- 31.07.2014թ./:
- 1.3. Համայնքային աղետների նախապատրաստման և արձագանքման կամավորական թիմերի ձևավորում 4 թիրախային գյուղական համայնքներում, յուրաքանչյուր թիմում ընդգրկված են և տղամարդ, և կին՝ անդհանուր 20 անդամ:
- 1.4. «Աղետների Ռիսկի Նվազեցում», «Կլիմայի Փոփոխության Փոփոխություններ», «Հյուսիս գործողությունների պլան», «Փրկարարական սկզբունքներ և Առաջին օգնություն» թեմաներով դասընթացների կազմակերպում ձևավորված 4 ՀԱՆԱԿԹ -ի համար, որին կհաջորդի ուսումնական վարժանքները /բյուջեն 17.220 եվրո, ժամանակահատված՝ 01.03.2013թ.- 31.10.2015թ./:
- 1.5. ՀԱՆԱԿԹ -երին համապատասխան անհատական և թիմային սարքավորումների/գույքի տրամադրում /բյուջեն 32.070 եվրո, ժամանակահատված՝ 01.02.2013թ.- 31.07.2014թ./:
- 1.6. Փոքրամասշտաբ կանխարգելման ծրագրերի մշակում և իրականացում 4 թիրախային գյուղական համայնքներում /բյուջեն 12.400 եվրո, ժամանակահատված՝ 01.03.2013թ.- 31.10.2015թ./:
- 1.7. Թիրախ համայնքների 4 դպրոցների թվով 40 ուսուցիչների համար ԱՌՆ, Կլիմայի Փոփոխության և կանխարգելման միջոցների վերաբերյալ դասընթացների կազմակերպում, որոնք հետագայում կկազմակերպեն նշված դասընթացները իրենց աշակերտների համար /բյուջեն 7.366 եվրո, ժամանակահատված՝ 01.03.2013թ.- 31.08.2014թ./:
- 1.8. Ուսուցանված ուսուցիչների միջոցով 6000 աշակերտների՝ ոչ-ֆորմալ ուսումնական/իրազեկման մակարդակի բարձրացում, որոնք հետագայում կիրականացնեն աղետների ժամանակ տանը սպառնացող ռիսկերի գնահատում և ընտանիքի անդամների, բարեկամների, ինչպես նաև հարևանների օգնությամբ կմշակեն ԱՇՊ և կկազմակերպեն ոչ կառուցվածքային կանխարգելման միջոցառումներ /բյուջեն 7.572 եվրո, ժամանակահատված՝ 01.04.2013թ.- 25.12.2014թ./:


12/10.2

- 1.9. ԱՌՆ թեմայով նկարչության մրցույթի և մանկական վիկտորինայի անցկացում թիրախ դպրոցներում /բյուջեն 6.226 եվրո, ժամանակահատված՝ 01.04.2013թ.- 25.12.2014թ./:
- 1.10. Թիրախ դպրոցներում տարահանման պլանի, Ելքի նշանների և ուսումնական տարահանման պլանի վերանայում/մշակում /բյուջեն 3.090 եվրո, ժամանակահատված՝ 01.04.2013թ.- 25.12.2014թ./:

Ակնկալվող արդյունք 2

- 2.1. ԱՌՆ, Կլիմայի Փոփոխության և ոչ կառուցվածքային կանխարգելման միջոցների վերաբերյալ ուսումնական և հաղորդակցության նյութերի վերանայում/մշակում/տպագրում 22 Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ /բյուջեն 33.370 եվրո, ժամանակահատված՝ 01.03.2013թ.- 30.12.2014թ./:
- 2.2. Երևանի, Վանաձորի և Մտեփանավանի 12 դպրոցների թվով 60 ուսուցիչների համար ԱՌՆ, Կլիմայի Փոփոխության և կանխարգելման միջոցների վերաբերյալ դասընթացների կազմակերպում, որոնք հետագայում կկազմակերպեն նշված դասընթացները իրենց աշակերտների համար /բյուջեն 18.734 եվրո, ժամանակահատված՝ 01.03.2013թ.- 31.08.2014թ./:
- 2.3. Ուսուցանված ուսուցիչների միջոցով 6000 աշակերտների՝ ոչ-ֆորմալ ուսումնական/իրազեկման մակարդակի բարձրացում, որոնք հետագայում կիրականացնեն աղետների ժամանակ տանը սպառնացող ռիսկերի գնահատում և ընտանիքի անդամների, բարեկամների, ինչպես նաև հարևանների օգնությամբ կմշակեն ԱՇՊ և կկազմակերպեն ոչ կառուցվածքային կանխարգելման միջոցառումներ /բյուջեն 9.216 եվրո, ժամանակահատված՝ ապրիլ, 2013թ.- դեկտեմբեր, 2014թ./:
- 2.4. ԱՌՆ թեմայով նկարչության մրցույթի և մանկական վիկտորինայի անցկացում թիրախ դպրոցներում /բյուջեն 21.451 եվրո, ժամանակահատված՝ 01.04.2013թ.- 25.12.2014թ./:
- 2.5. Թիրախ դպրոցներում տարահանման պլանի, Ելքի նշանների և ուսումնական տարահանման պլանի վերանայում/մշակում /բյուջեն 7.990 եվրո, ժամանակահատված՝ 01.04.2013թ.- 25.12.2014թ./:
- 2.6. Քաղաքային համայնքներում ԱՌՆ մոդելի մշակում և փարձարկում /բյուջեն 45.520 եվրո, ժամանակահատված՝ 01.01.2014թ.- 30.11.2015թ./:

12/10.2




Ակնկալվող արդյունք 3

- 3.1. Ազգային մակարդակում հանդիպման կազմակերպում ԱՌՆ Ազգային պատժորմի հետ քննարկելու համայնքային մակարդակում ԱՌՆ հիմնահարցերը և ներկայացնելու Ծրագրի արդյունքները /բյուջեն 2.440 եվրո, ժամանակահատված՝ 01.01.2013թ.- 30.11.2015թ./:

	<p>3.2. Մարզային մակարդակում հանդիպումների կազմակերպում պետական և ոչ պետական շահագրգիռ կողմերի հետ՝ ապահովելու կողմերի միջև սերտ համագործակցությունը և ստեղծելու փորձի փոխանակման հարթակ /բյուջեն 2.463 եվրո, ժամանակահատված՝ 01.01.2013թ. - 30.11.2015թ./:</p> <p>3.3. Ծրագրի լավագույն փորձի և քաղած դասերի ներկայացում սեմինարների և հանդիպումների ընթացքում /բյուջեն 1.200 եվրո, ժամանակահատված՝ 01.01.2015թ. - 30.11.2015թ./:</p> <p><b>Ակնկալվող արդյունք 4</b></p> <p>4.1. Տարածաշրջանային համագործակցության հանդիպումների և այցելությունների կազմակերպում՝ քաղած դասերի և փորձի փոխանակման նպատակով /բյուջեն 1.940 եվրո, ժամանակահատված՝ հունվար, 2013թ. - դեկտեմբեր, 2015թ./:</p> <p>4.2. Ծրագրի քաղած դասերը, լավագույն փորձը և խորհուրդները ներառող վերջնական գեկույցի մշակում և լուսաբանում հիմնական շահագրգիռ կողմերին օժանդակելու համայնքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցմանը:</p> <p>Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կաճում են 28.700 եվրո, որը ներառում է գործունեության համար ձեռք բերվող ավտոմեքենայի գումարը և նրա համար անհրաժեշտ պահպանման և այլ ծախսեր, գրեմական պիտույքներ, կապի և կոմունալ և այլ ծախսեր:</p>
<p>10. Զեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>Ծրագրի շրջանակներում ձևավորվող 4 համայնքային թիմերի ձեռք է բերվելու համապատասխան գույք /տաղավարտ, պարան, անհատական հագուստ, ուսապարկ, վրան և այլն/, որի գումարը կազմում է 32.070 եվրո: Տրամադրված գույքը հնարավորություն կընձեռի թիմերին օպերատիվ արձագանքելու տեղական արտակարգ իրավիճակներին: Բնակչության իրազեկման բարձրացման միջոցառումների իրականացման նպատակով տպագրվելու են մի շարք ուսումնական նյութեր /պատասխաններ, բուկլետներ, ձեռնարկ և այլն/, որոնց գումարը կազմում է 33.370 եվրո: Շահառու 4 համայնքներում իրականացվելու են աղետների կանխարգելման ենթաձևեր: Դրանց գումարը կազմում է 12.400 եվրո: Ավելին, ծրագրի շրջանակներում նախատեսված հանդիպումները, դասընթացներն, մրցույթները ու այլ նմանատիպ միջոցառումները իրականացնելու համար ձեռք են բերվելու գրեմական պիտույքներ, սնունդ, ուսումնական վարժանքների համար՝ անհրաժեշտ պարագաներ /առաջին օգնության արկղ, կրակմարիչ և այլն/, վճարվելու է մասնակիցների համար գիշերավարձ և այլ ծախսեր, որոնց գումարը կազմում է 117.940 եվրո: ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան</p>



12/10.2



	<p>և Վանաձոր քաղաքներում իրականացվելու են ԱՌՆ գործողություններ և հիմնվելու են երկու կենտրոններ, որի բյուջեն է 45.520 եվրո: Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կազմում են 28.700 եվրո, որը ներառում է գործունեության համար ձեռք բերվող ավտոմեքենայի գումարը և նրա համար անհրաժեշտ պահպանման և այլ ծախսեր, գրեմական պիտույքներ, կապի և կոմունալ և այլ ծախսեր:</p>
<p>11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը</p>	<p>Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 28.700 եվրո, որը ներառում է գործունեության համար ձեռք բերվող ավտոմեքենայի գումարը և նրա համար անհրաժեշտ պահպանման և այլ ծախսեր, գրեմական պիտույքներ, կապի և կոմունալ և այլ ծախսեր:</p>
<p>12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության՝ հատկապես նրա Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի, Փրկարար ծառայության և Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության հետ, ՀՀ Կրթության և գիտության նախարարության և նրա Երևանի և Լոռու վարչությունների, Լոռու մարզպետարանի, "Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ" հիմնադրամի, 7 թիրախային քաղաքային և գյուղական համայնքների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Վերոնշյալ կառույցների, ինչպես նաև մարզում գործող այլ տեղական և միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ պատշաճ համագործակցություն և համակարգում ապահովելու նպատակով՝ ծրագրի շրջանակներում կազմակերպվելու են եռամսյա մարզային համակարգման հանդիպումներ, որը ղեկավարվելու է Լոռու մարզային իշխանությունների, մարզային Փրկարար ծառայության և Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից:</p>
<p>13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>Նախատեսվում է տրամադրել եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Ավստրիական Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր նվիրատուների կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Նախատեսվում է կազմակերպել ծրագրի միջանկյալ և ավարտական արդյունքների, քաղած դասերի և փորձի վերաբերյալ հանդիպումներ Երևանում և Լոռու մարզում, ինչպես նաև ներկայացնել հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, ըստ սահմանված կարգի: Ավելին, ծրագրի շրջանակներում նախատեսված եռամսյակային համակարգման հանդիպումները նույնպես կլինեն որպես վերահսկողության մեխանիզմ:</p>

12/10.2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1025 - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-615-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 07/80-2/27455-15 և սեպտեմբերի 22-ի N 06/3-3/26856-15 եզրակացությունները, հաշվի առնելով Հայկական կարմիր խաչի ընկերության 2015 թվականի սեպտեմբեր 18-ի N 512 գրությունը, որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Կրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-615-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետի «237,881,369 դրամ» բառերը փոխարինել «239,800,496 դրամ» բառերով:

2) որոշման կողմից նախատեսվող արդյալ նոր խմբագրությամբ (կցվում է):

3) որոշման ուղղակի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության:



*[Handwritten signature]*

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Ա Կ Ա Շ Է  
Գլխավոր կարմիր խաչի ընկերության  
«28» սեպտեմբեր 2015թ.



Գլխավոր

Կ ա ռ ո շ մ ե ն ի մ ա կ ա յ ա յ ու ն տ ե ղ ա կ ա ն հ ա մ ա յ ն ք ն ք ն ր Վ ր ա ս տ Ծ Ր Ա Չ Ի Ր

1. Ծրագրի նպատակով	Հարցանել Հայաստանի թիրախային խոցելի համայնքների դիմակայունությունը աղետներից նախապատրաստվելու, կանխարգելելու և արձագանքելու հարցում Հայկական կարմիր խաչի ընկերության՝ Աղետների դիմելի նվազեցման համայնքային մոդելի ավիտիմանակ տարածման միջոցով:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակով	«Հ» օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3. Բարեգործ	Եվրոխորհրդի մարդասիրական օգնությունների բաժինը և Դամիական, Իլյանդական և Ալստրիական կարմիր խաչի ընկերությունները
4. Ծրագիրը կատարողը	Հայկական կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Հ» Շիրակի մարզ - Գյումրի, Արթիկ, Առապի, Սարնաղբյուր, Անուշավան, Փանիկ, Մեծ Մանթաշ, Նոր Կյանք, Բենիամին, Ազատան, Պենգաշեն, Մեծ Սեպասար, Կապու, Կեթի, Շիրակ, Կրեգնարեն և Նոր Բերդաշեն բարձրալից և գյուղական համայնքներ: Աղետների կառավարման բնագավառ:
6. Ծրագրի բյուջեն	239.800.496 ՀՀ դրամ /441.206 եվրո/ - առանց ԱԱՀ
7. Բարեգործություն ստացողը	«Հ» Շիրակի մարզ - Գյումրի և Արթիկ բարձրալից համայնքների, ինչպես նաև ծրագրի առաջին երկու փուլերում արդեն իսկ ընդգրկված/գործող Առապի, Սարնաղբյուր, Անուշավան, Փանիկ, Մեծ Մանթաշ, Նոր Կյանք, Բենիամին, Ազատան, Պենգաշեն Մեծ Սեպասար, Կապու, Կեթի, Շիրակ, Կրեգնարեն և Նոր Բերդաշեն գյուղական համայնքների բնակչություն: Համայնքների ընտրությունը կատարվել է Շիրակի մարզային իշխանության և մարզային Փրկարար ծառայության հետ համատեղ՝ հաշվի առնելով համայնքների՝ աղետների նկատմամբ ծիսը, աղետների կրկնման համայնքային կառավարման և հարուցվող վնասները:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	01.05.2014 – 31.10.2015
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ երեք ուղղություններով: 1. Համայնքային մակարդակում աղետների ռիսկերի նվազեցում, սեփու

12/10.3

տեղայնացնել և համապատասխանեցնել համայնքային օրենսդրական դաշտին, օգտագործելով փորձված մեթոդաբանությունը, որը կարող է ինտեգրվել համայնքային զարգացման պլանավորման գործընթացում այլ համայնքներում օգտագործելու պայմանով:

- 2. Ամրապնդել աղետների ռիսկի կառավարման կարողությունները համայնքային, մարզային և ազգային մակարդակներում, ներառյալ ինստիտուցիոնալ կապերը և շահերի պաշտպանությունը:
- 3. Համայնքային մակարդակում ԱՌՆ արդյունավետ փորձի լուսաբանում Հարավային Կովկասի և գլոբալ ԱՌՆ հարթակի հիմնական շահագրգիռ կողմերի՝ այդ թվում Կարմիր Խաչի/Մահիկի շարժման գործնակերների միջև:

**Օրագրի շրջանակներում ուսուցողությունների՝ նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝**

- 1. **Առաջին ուղղություն**
- 1.1. Համայնքային թիմերի համար կազմակերպել վարժանքներ՝ մարզային/ տեղական իշխանությունների հետ համատեղ, և ապահովել փորձի փոխանակում արկա և նորաստեղծ համայնքային թիմերի միջև: /բյուջեն 10.439.424 դրամ, ժամանակահատված՝ 01.09-30.11, 2014թ. և 01.04-31.08, 2015թ./
- 1.2. Կազմակերպել դասընթացներ արկա և նորաստեղծ համայնքային թիմերի համար, թիմերին տրամադրել համապատասխան գույք: /բյուջեն 57.883.480 դրամ, ժամանակահատված՝ 01.06-30.09.2014թ. և 01.02-30.04.2015թ./
- 1.3. Թիրախային համայնքներում իրականացնել խոցելիության և կարողությունների գնահատում (ԽԿԳ), օգտագործելով «Ով որտեղ ինչ է անում» մտայնումը և Խոցելիության Վերլուծության Հնդհանուր Գործիքները: Մշակել/թարմացնել ԽԿԳ զեկույց յուրաքանչյուր թիրախային համայնքի համար: /բյուջեն 7.452.000 դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.10.2014թ./
- 1.4. Թիրախային համայնքներում կազմակերպել Կլիմայի Փոփոխության Հարմարվողականության/ կենսապայմանների պաշտպանության դասընթացներ: /ժամանակահատված՝ բյուջեն 5.793.160 դրամ, 01.02-31.05.2015թ./
- 1.5. Տրամադրել աջակցություն 6 ջրհեղեղավտանգ տարածքներում գտնվող թիրախային համայնքներին՝ ստեղծելու/ զարգացնելու վաղ ազդարարման կարողություններ: /բյուջեն 5.399.767 դրամ, ժամանակահատված՝ 01.08.2014թ. - 30.10.2015թ./

12/10.3

- 1.6. Թիրախային համայնքներում իրականացնել փոքրամասշտաբ կանխարգելման ծրագրեր համայնքային իշխանությունների և բնակչության հետ համատեղ: /բյուջեն 37.971.379 դրամ, ժամանակահատված՝ 01.07-31.10.2014թ. և 01.03-30.10.2015թ./
- 1.7. Թարմացնել, մշակել և տարածել ԱՌՆ ուսուցողական և հաղորդակցության նյութեր ծրագրի թիրախային համայնքներում: /բյուջեն 48.780.000 դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.08.2014թ./
- 1.8. Կազմակերպել դասընթացներ շահառու դպրոցների ուսուցիչների համար՝ ԱՀՊ մշակումը ալբերի ծավալելու, ԱՀՊ մրցույթների կազմակերպելու և ԱՀՊ վերաբերյալ տեղեկատվության և նյութերի բաշխման համար: /բյուջեն 7.849.180 դրամ, ժամանակահատված՝ 01.07-31.10.2014թ./
- 1.9. Նպաստել շահառու դպրոցների հակահրդեհային համակարգի արդիականացմանը և աջակցել տեղական իշխանություններին և համապատասխան նախարարություններին դպրոցների տարահանման պլաների արդիականացման/ վերանայման հարցում: /բյուջեն 133.400 դրամ, ժամանակահատված՝ 01.09.2014թ. մինչև 31.05. 2015թ./
- 1.10. Օրագրի նախնական և ամփոփիչ ուսումնասիրություն: /ժամանակահատված՝ 01.06-31.07.2014թ. և 01.08-30.09.2015թ./

**2. Երկրորդ ուղղություն**

- 2.1. Համայնքային և մարզային մակարդակներում կազմակերպել համակարգման և տեղեկատվության փոխանակման հանդիպումներ կլոր սեղանի շուրջ հիմնական շահագրգիռ կողմերի հետ համատեղ: /բյուջեն 7.285.871 դրամ, ժամանակահատված՝ 15.05.2014թ. և 20.10.2015թ./
- 2.2. Նպաստել համայնքային գործողությունների պլանի մշակմանը/արդիականացմանը/հաստատմանը, և նպաստել ԱՌՆ համար նախատեսված ծախսերի ներառմանը համայնքային բյուջեներում: ինչպես նաև շեշտադրել ԱՌՆ դերը համայնքային զարգացման և տարեկան պլաններում: /բյուջեն 135.520 դրամ, ժամանակահատված՝ 01.07.2014թ. և 30.09.2015թ./
- 2.3. Աջակցել Շիրակի մարզի ԱՌՆ թիմին կարողությունների ամրապնդման գործընթացին, ՀՀ ԱՌՆ Ազգային Պլատֆորմի գործունեության շրջանակներում: /բյուջեն 650.000 դրամ, ժամանակահատված՝ 01.07.2014թ. և 30.09.2015թ./
- 2.4. Հայկական Կարմիր Խաչի ընկերության Աղետների արձագանքման պլանի վերանայման գործընթացին մասնակցություն և աջակցություն: / ժամանակահատված՝ 10.01-30.09.2015թ./



12/10.3


	<p>2.5. Կոնսորցիումի գործընկերների կողմից կազմակերպված Մարգային հրահանգային դասընթացներ, սեմինարներ, հետևյալ թեմաներով. Մոցիալ-հոգեբանական աջակցություն, ներառյալ «Երեխաների դիմակայունությանը ուղղված ծրագիրը»; Արձագանքման պլանավորում; Կլիմայի փոփոխության հարմարվողկանությունը համայնքային մակարդակում և կենսապայմանների պաշտպանություն, մարդասիրական իրավունք; /բյուջեն <b>6.885.944</b> դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.10.2014թ. և 10.01-30.06.2015թ./</p> <p><b>3. Երրորդ ուղղություն</b></p> <p>3.1 «ԱՌՆ համայնքային մոդելի» և «Լավագույն փորձեր և դասեր» զեկույցի մշակում և բաշխում տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային հիմնական գործընկերներին կլոր սեղանների, միջազգային կոնֆերանսների ու ԿԻ և ԿՄ գործընկերների միջև փոխանակման այցելությունների ընթացքում: /բյուջեն <b>2.146.861</b> դրամ, ժամանակահատված՝ 01.05-30.10.2015թ./</p> <p>3.2 Կազմակերպել ԱՌՆ խորագրով հանրային միջոցառումներ: /բյուջեն <b>2.908.240</b> դրամ, ժամանակահատված՝ 01-31.10.2014թ. /</p> <p>3.3 Եռամսյակային կոնֆերանսների Կազմակերպում կոնսորցիումի գործընկերների և այլ համապատասխան ԿԻ և ԿՄ շահառուների միջև Skype-ի միջոցով:</p> <p>3.4 Մասնակցել Հարավային Կովկասի/ Կենտրոնական Ասիայի «Լավագույն փորձ և քաղած դասեր» սեմինարներին: /բյուջեն <b>1.434.866</b> դրամ, ժամանակահատված՝ 01.09.2014թ.-30.09.2015թ./</p> <p>Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կամում են <b>36.651.404</b> դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ մեքենաների պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի և կոմունալ, գովազդային կուրթերի և այլ ծախսեր:</p>
<p>10. Զեռք բերվող (ներմուծվող) սպորանքների ու ծառայությունների քանակները, միջակայքը, ծավալները և արժեքները:</p>	<p>Ծրագրի շրջանակներում արդեն իսկ ձևավորված 14 համայնքային թիմերի և նախատեսված 4 նոր թիմերի համար ձեռք է բերվելու համապատասխան գույք /սաղավարտ, պարան, անհատական հագուստ, ուսապարկ, վրան և այլն/, որի գումարը կազմում է <b>37.118.720</b> դրամ: Տրամադրված գույքը հնարավորություն կընձեռի թիմերին օպերատիվ արձագանքելու տեղական արտակարգ իրավիճակներին: Բնակչության իրազեկման բարձրացման միջոցառումների</p>



12/10.3

	<p>իրականացման նպատակով տպագրվելու են ուսումնական նյութեր, որոնց գումարը կազմում է <b>48.480.000</b> դրամ: Ավելին, ծրագրի շրջանակներում նախատեսված հանդիպումները, դասընթացներն ու այլ նմանատիպ միջոցառումները իրականացնելու համար ձեռք են բերվելու գրենական պիտույքներ, սնունդ, ուսումնական վարժանքների համար անհրաժեշտ պարագաներ /առաջին օգնության արկղ, կրակմարիչ և այլն/, վճարվելու է մասնակիցների համար գիշերավարձ և այլ ծախսեր, ինչպես նաև թիքախային համայնքների վաղ ազդարարման կարողությունները զարգացվելու համար տրամադրվելու է տեխնիկական աջակցություն և գույք և իրականացվելու են համայնքային փոքրածավալ կանխարգելման ծրագրեր, որոնց գումարը կազմում է <b>117.550.372</b> դրամ: Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կամում են <b>36.651.404</b> դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ մեքենաների պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի և կոմունալ, գովազդային նյութերի և այլ ծախսեր:</p>
<p>11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը</p>	<p>Կազմակերպչական և պահպանման ծախսերը՝ <b>36.651.404</b> դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ մեքենաների պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի և կոմունալ, գովազդային նյութերի և այլ ծախսեր:</p>
<p>12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Ծրագիրը իրականացվելու է Շիրակի մարզպետարանի, «Արտակարգ իրավիճակների նախարարության» հատկապես նրա ձգնաժամային կառավարման պետական ակադեմիայի, Շիրակի մարզային փրկարար ծառայության և Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության հետ, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլանֆորմ» հիմնադրամի, «Կրթության և գիտության նախարարության և նրա Շիրակի մարզային ստորաբաժանման, 20 թիքախային քաղաքային և գյուղական համայնքների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Վերոնշյալ կառույցների, ինչպես նաև մարզում գործող այլ տեղական և միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ պատշաճ համագործակցություն և համակարգում ապահովելու նպատակով՝ ծրագրի շրջանակներում կազմակերպվելու են եռամսյա մարզային համակարգման հանդիպումներ, որը ղեկավարվելու է Շիրակի մարզային իշխանությունների, մարզային Փրկարար ծառայության և Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից:</p>
<p>13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ</p>	<p>Նախատեսվում է տրամադրել ամսեկան, եռամսյակային և ամսատանան</p>

12/10.3



վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը

հաշվետվություններ Ղանիական Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր նվիրատուների և Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Հայաստանյան գրասենյակի կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է Շիրակի մարզում իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Նախատեսվում է կազմակերպել ծրագրի միջանկյալ և ավարտական արդյունքների քաղած դասերի և փորձի վերաբերյալ հանդիպումներ Երևանում և Շիրակի մարզում, ինչպես նաև ներկայացնել հաշվետվություններ ՀՀ Արտակառուցվածքային շրջանառության բարեգործական համակարգում հանձնաժողովին, ուստի սահմանված կարգի:



12/10.3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1026 - Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿԱՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Այբ» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի  
սեպտեմբերի 30-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ամրանը (70  
տոննա, 21,000,000 դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսը, «Արարատյան» ՄՏ)  
ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ»  
կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի  
կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1027 - Ա  
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿԱՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1  
(«Այբ» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի  
սեպտեմբերի 30-ի համաձայնեցման թերթը, որոշում է.*

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռը (գրասենյակ-կենցաղային մոդուլ 6 հատ, 6 տեղ, 13,404 կգ ընդհանուր քաշով, 1,755,000 ուսական ուրվուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրաման ծախսերը կազմել են 1,624,900 դրամ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1028 - Ա  
քաղ. Երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ  
(«Այբ» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի  
սեպտեմբերի 30-ի համաձայնեցման թերթը, ո Ր Ո Շ ՈՒ Մ է.*

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Կորյունի փողոց, 19ա, ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետու-  
թյան կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում ծրագրի մասին» N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Միկմետալ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02233484) 2015 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված՝ N 17.09.2015/Մ2 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ամրանի մատակարարում՝ 119,191,450 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության:

ՆԱԽԱԳՐԱԿ  


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1029-Ա  
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾ-  
ՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի սեպտեմբերի 30-ի համաձայնեցման թերթը, որոշում է.*

1. Բարեգործական որակել «BZA Challenge» ֆրանսիական ասոցիացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզահագուստի և շքանշանների (4 տեղ, 1,090 կգ ընդհանուր քաշով, 15,080 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,369.95 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԸԸ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1030-Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմ-  
բերի 1-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված համա-  
կարգչային ստեղնաշարերը (50 հատ՝ 49 կգ ընդհանուր քաշով, 2,397.28 ԱՄՆ-ի դոլարին  
համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 147.28 ԱՄՆ-ի դոլար փոխադրման  
ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարու-  
թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմ-  
բերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար  
տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի  
շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն:

ՆԱԽԱԳԱԾ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1031-Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-  
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱ-  
ԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմ-  
բերի 1-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված համա-  
կարգչային ստեղնաշարերը (64 հատ՝ 63 կգ ընդհանուր քաշով, 3,068.52 ԱՄՆ-ի դոլարին  
համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 188.52 ԱՄՆ-ի դոլար փոխադրման  
ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարու-  
թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի  
23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար  
տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված  
(2015 թվականի հունիսի 26-ի N Մ-680-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակ-  
ներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1032-Ա  
քաղ. երևան

**«ՓՅՈՒՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՂՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-  
ՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԷՐԵՐՈՒՆԻ - ԵՐԵՎԱՆ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


դրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի  
զգալի նշանակություն՝

«mango languages» ամերիկյան կազմակերպության հետ (6689 Orchard Lake Rd.  
#301 West Bloomfield, MI 48322-3404, ԱՄՆ) 2015 թվականի օգոստոսի 1-ի N L9213 հաշիվ-  
ապրանքագրով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է ծրագրի արտոնագրի  
ձեռքբերում՝ 666.66 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված  
արժեքի հարկի:

2. Սույն որոշումով սահմանվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-  
ություն:

ՆԱԽԱՐԱՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1049-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-  
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-  
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 3  
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2015 թվականի սեպտեմբերի 28-ի N 07/80-2/27735-15 և սեպտեմբերի 25-ի N 06/3-3/27468-15  
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672)  
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-  
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնա-  
դրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին»  
N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի  
զգալի նշանակություն՝

«Յու Այ Թի Ի Էքսպո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02578407) 2014 թվականի օգոստոսի  
31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տաղավարի  
վարձակալում՝ 773,334 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1050-Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-  
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱ-  
ԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N Մ-800-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ  
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2015 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/26721-15 և սեպտեմբերի 17-ի N 06/3-3/26237-15  
եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672)  
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-  
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի  
կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման,  
վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-800-Ա որոշմամբ հաստատված  
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սոֆադ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00019746) 2015 թվականի սեպտեմբերի 7-ին կնքված  
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 250 տուփ երկշերտ զուգարանի  
թղթի ձեռքբերում՝ 125,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1051-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ  
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2**

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 07/80-2/27613-15 և սեպտեմբերի 3-ի N 06/3-3/24302-15 եզրակացությունները, որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա, փետրվարի 25-ի N Մ-153-Ա և օգոստոսի 28-ի N Մ-911-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի 10-րդ կետի ութերորդ ենթակետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) «773,000,000 դրամ» բառերը փոխարինել «799,894,000 դրամ» բառերով.
  - 2) «67,000,000 դրամ» բառերը փոխարինել «40,106,000 դրամ» բառերով
2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պոժտեխնիկա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01013653) 2015 թվականի օգոստոսի 18-ին կնքված՝ N SA 2015-1808 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հակահրդեհային համակարգի սարքավորումների և կրակմարիչների մատակարարում՝ 7,870,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1052-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ  
24-Ի N Մ-749-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N 07/80-2/25659-15 և սեպտեմբերի 9-ի N 06/3-3/25147-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2015 թվականի սեպտեմբերի 3-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» N Մ-749-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «19,353,400 դրամի չափով» բառերը փոխարինել «20,003,400 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱՐԱՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1053-Ա  
քաղ. երևան


«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈԼՖԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱՎԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾ-  
ՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 28-ի N 07/80-2/27684-15 և սեպտեմբերի 29-ի N 06/3-3/28120-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 28-ի N 1/06/1247-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Շոտլանդիայի գոլֆի ասոցիացիայի «R&A» հիմնադրամի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի ազգային գոլֆի ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված գոլֆի մանկական մարզագույքի (2 տեղ, 61 կգ ընդհանուր քաշով, 1,299.72 բրիտանական ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 576.43 բրիտանական ֆունտ ստեռլինգ, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ազգային գոլֆի ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1054-Ա**

**«ՔԵՆԴԼ» ՍԻՆՔՐՈՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՆՍԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ  
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 28-ի N 07/80-2/27723-15 և հոկտեմբերի 1-ի N 06/3-3/28294-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Բարեգործական որակել Գերմանիայի Դաշնության պետական «Գերմանական էլեկտրոնային սինքրոտրոն - DESY» հետազոտական կենտրոնի կողմից, որպես օժանդակություն, «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի հասցեով ուղարկված սարքավորման (մեկ տեղ, 46 կգ ընդհանուր քաշով, 56,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 248.75 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1055-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-  
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱ-  
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-  
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2  
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2015 թվականի սեպտեմբերի 28-ի N 07/80-2/27897-15 և սեպտեմբերի 30-ի N 06/3-3/28182-15  
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված  
հակահրդեհային համակարգի սարքավորումները (5 տեղ, 1,800 կգ ընդհանուր քաշով,  
36,442.29 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են  
844,000 դրամ, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարու-  
թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետր-  
վարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ  
Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հար-  
դարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատ-  
ված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015  
թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա և հուլիսի 24-ի N Մ-758-Ա որոշումների խմբագրու-  
թյամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-  
ություն:

ՆԱ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1056-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒԼԻՍԻ 18-Ի N Մ-664-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-  
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2015 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/80-2/28119-15 և սեպտեմբերի 29-ի N 06/3-3/28175-15  
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց  
միության կողմից ձեռք բերված կվարցային ավազը (75 տոննա ընդհանուր քաշով, 3,375  
ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման  
ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարու-  
թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի  
18-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից  
իրականացվող «Վանաձորի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և  
կահավորում» ծրագրի մասին» N Մ-664-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակ-  
ներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1057-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-717-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N 07/80-2/28654-15 և սեպտեմբերի 30-ի N 06/3-3/28311-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված կվարցային ավազը (50 տոննա ընդհանուր քաշով, 2,250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Խաղաղաշտերի կառուցում» ծրագրի մասին» N Մ-717-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**


**2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1058-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-134-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 07/80-2/28/16-15 և սեպտեմբերի 29-ի N 06/3-3/27990-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 28-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/8539-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (մակարոնային արտադրանք՝ 2,000 տեղ, 20,400 կգ ընդհանուր քաշով, 43,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ, բաշխման ցանկը կցվում է) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-134-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հոնոլուլուի Կոնգրեսի Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Կիրակոսի և Տավուշի մարզպետներին:




ՆԱԽ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ինվ. թվ. P-D185501 18.09.2015

Բեռի բաշխման ցանկ

N N	Սպորանքի անվանումը	Ցանկումնյալը ըստ մարզերի	Ցանկումնյալը քանակը	Ցանկումնյալը (կգ)	Արժեքը ըստ կիլոգրամների (ԱՄՆ-ի դոլար)
1	Սակարոնային արտադրանք	Գեղարքունիքի մարզ	Գետիկ Այգուտ Մարտունի Ղարաբակ Կանան Կարավան Բարեպատ Չորավանք Մետաքամեջ Փակար Թրուսուր Արտաշատ	74 164 73 81 188 23 6 31 22 61 81 51	737 1,634 727 807 1,873 229 60 309 219 608 807 508
		Արմավիրի մարզ	Վեդի	17	169
		Արարատի մարզ	Արտաշատ Ճետազատ	74 39	159 389
		Կոտայքի մարզ	Մրցանուշ Չարենցավան Սևաբերդ Չորաբլուր Արվիճան	16 13 41 18 38	159 130 409 179 379
		Լոռու մարզ	Վանաձոր	48	478
		Տավուշի մարզ	Գիլիջան	15	149
		Երևան	Իթևան	83	179
			3201	14770	31,898
			4335	20000	43,200



Մատուցողի տեղեկություններ  
Ստորագրող  
Ք. Զանգազյան

24.12/6.9



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1059-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1220-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ  
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 07/80-2/28415-15 և սեպտեմբերի 29-ի N 06/3-3/27992-15  
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07/003481)  
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-  
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Տաշիր» բարեգործական  
հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի  
կառուցման» ծրագրի մասին» N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի դեկտեմ-  
բերի 12-ի N Մ-1198-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետև և դրա  
համար ունի զգալի նշանակություն՝

«Վեկա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01525774) 2015 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված՝  
N ՎՏՀ/04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 400 քառ. մետր տրա-  
վերտինե երեսապատման սալիկների ձեռքբերում՝ 4,800,000 դրամի չափով, առանց ավե-  
լացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումով սահմանված պայմաններով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1060-Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ  
5-Ի N Մ-587-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/80-2/27959-15 և սեպտեմբերի 25-ի N 06/3-3/27469-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2015 թվականի սեպտեմբերի 18-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» N Մ-587-Ա որոշման 1-ին կետի երկրորդ պարբերությունում «26,935,000 դրամի չափով» բառերը փոխարինել «27,199,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1061 -Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ  
ԿԵՆՊԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի սեպտեմբերի 18-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Ամստերդամի «Նատուրա Արտիս Մաջիսթրա թագավորական այգու» կողմից նվիրաբերված անասնաբուժական դեղորայքը (4.6 կգ ընդհանուր քաշով, 2,361.52 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 238.48 եվրո, ՄՓԵԻԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1302-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1062 -Ա  
քաղ. Երևան

ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի սեպտեմբերի 18-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հասցեով ստացված երկու խմբաքանակ բեռի ներմուծման ծրագիրը.

1) Նիդեռլանդների Սպենհուլի պրիմատների կենդանաբանական այգու կողմից նվիրաբերված 11 հատ սևագլուխ սկյուռակապիկ՝ 2 տեղ, 40 կգ ընդհանուր քաշով, 600 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, 356.50 եվրո փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» մաքսատուն.


2) Ամստերդամի «Նատուրա Արտիս Մաջիսթրա թագավորական այգու» կողմից նվիրաբերված 3 հատ սուրիկատ և 2 հատ պատագոնյան առանձնյակ (մարի)՝ 5 տեղ, 109 կգ ընդհանուր քաշով, 100 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 844.50 եվրո, «Զվարթնոց» մաքսատուն:

Կենդանիները անհատույց հանձնվելու են «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1063 - Ա

քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ  
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմբերի 1-ի համաձայնեցման թերթը, ո Ր Ո Շ ՈՒ Մ է.*

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ամերիկայի ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից ուղարկված դեղորայքի և բժշկական սարքավորումների (15 տեղ, 1,649.74 կգ ընդհանուր քաշով, 142,627.99 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 6,700 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը հանձնվելու է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի «Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումները ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ


Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 սեպտեմբերի 2015 թվականի N Մ- 1064 - Ա  
քաղ. երևան


ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
«ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N 07/80-2/28668-15 և հոկտեմբերի 1-ի N 06/3-3/28292-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 29-ի N 02/14/11728-15 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 5,410,503 դրամ արժողությամբ «Գիտաժողովի կազմակերպում» ծրագրի (կցվում է):
2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 0470340) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝  
«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00030747) 2015 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում գիտաժողովի կազմակերպման ծառայությունների մատուցում՝ 5,410,503 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:
4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




ՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
«25» սեպտեմբեր 2015

Գիտաժողովի կազմակերպում  
Ծ Ր Ա Գ Ր

20.12/1

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպել գիտաժողով, ապահովել գիտաժողովի կազմակերպման համար անհրաժեշտ պարագաներով, ժողովակազմներին գրեական պիտույքներով, ընմիջումներ և այլ հարցեր:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրերով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործոր (բարեգործները)	Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ՀՎՀՀ 04703401
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք, բնագավառը՝ հոգևոր:
6.	Ծրագրի բյուջեն	5,410,503 ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հոգևորականներ, բարձրաստիճան հյուրեր:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	20 սեպտեմբեր 2015թ. – 5 հոկտեմբեր 2015թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում Մայր Աթոռի տարածքում կազմակերպել գիտաժողով և հոգալ կազմակերպական այլ հարցեր՝ ընդհանուր 5,410,503 ՀՀ դրամ գումարով, առանց ԱԱՀ: Աշխատանքներն իրականացնում է «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00030747), ք. Երևան, Վարդանանց 4, պայմանագիր կնքված 19.09.2014թ.: Ծրագիրը նախատեսված է իրականացնել 20 սեպտեմբեր 2015թ. – 5 հոկտեմբեր 2015թ.:
10.	Չեղք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գիտաժողովի կազմակերպական աշխատանքները՝ 5,410,503 ՀՀ դրամ գումարով, առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չի նախատեսվում
12.	Համադրվողությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական և ֆինանսական բաժինների և ՀՀ կազմակերպության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկատվություն:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1065 - Ա  
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
«ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՍՐԱՀԻ ՀԻՄՔԵՐԻ ԱՄՐԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ  
ԲԵՏՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 07/80-2/27414-15 և հոկտեմբերի 1-ի N06/3-3/28293-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 29 -ի N 02/14/11727-15 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 263,562,100 դրամ արժողությամբ «Մոմավառության սրահի հիմքերի ամրանավորման և բետոնային աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2015 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված՝ N 18Ը/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 263,562,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշման հիմքով կնքվելի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական ծախսերի հիշի

Մուշեղ եպիսկոպոս

«25» հոկտեմբեր 2015



**Մոմավառության սրահի հիմքերի ամրանավորման և բետոնային աշխատանքներ  
ԾՐԱԳԻՐ**

12/2

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Մոմավառության սրահի հիմքերի ամրանավորման և բետոնային աշխատանքները :
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործող (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ՀՎՀՀ՝ 06800406:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, բնագավառը՝ եկեղեցաշինություն:
6.	Ծրագրի բյուջեն	263,562,100 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հոգևորականները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	9 սեպտեմբեր 2015թ. – 9 սեպտեմբեր 2016թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մոմավառության սրահի հիմքերի ամրանավորման և բետոնային աշխատանքները՝ 263,562,100 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Հորիզոն-95» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ՝ 00801721, ՀՀ, Ք. Երևան, Ա. Ավետիսյան 118)՝ պայմանագիր կնքված 09.09.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 9 սեպտեմբեր 2015թ. – 9 սեպտեմբեր 2016թ.:
10.	Չեղք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մոմավառության սրահի հիմքերի ամրանավորման և բետոնային աշխատանքները՝ 263,562,100 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեղի կառավարության կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ծարտարապետաշինության կողմից կատարվող աշխատանքների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կատարվող ամփոփ տեղեկություն:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1066 - Ա  
քաղ. Երևան

**«ԱՐՄԱՆ ՏԵՐՏԵՐՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ  
ՁԵՆՔԵՐՈՒՄ ՄԱՅՐ ԱՔՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՃՈՂ ԵՎ ՍԲ.  
ՀԱՌԻՃԱՎԱՆՔԻ ԴՊՐԱՆՈՑԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 07/80-2/27451-15 և սեպտեմբերի 24-ի N 06/3-3/27257-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 30-ի N 02/14/11784-15 եզրակացությունները, **ո թ ո ղ թ մ Է**.


1. Բարեգործական որակելի «Արման Տերտերյան» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Արվյան 52, ՀՎՀՀ՝ 02631308) իրականացվող՝ 2,270,000 դրամ արժողությամբ «Համակարգչային սարքավորումներ ձեռքբերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Սբ. Հառիճավանքի դպրատնոցի համար» ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ «Արման Տերտերյան» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «Ակթերեյ-ԱՌՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02622926) 2015 թվականի հուլիսի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ 2,270,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
3. «Արման Տերտերյան» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի կամակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:
4. Սույն որոշումն առկայելիս Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի կառավարության արդարադատության նախարարության:



ՆԱԽԱԳԻՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
"Արման Տերտերյան, Տերտերյանի հիմնադրամ  
Տարին՝ 2015 թվականի օգոստոսի 17, 09.2015թ.



**«Համակարգչային սարքավորումների ձեռքբերում  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Սբ. Հառիճավանքի դպրատնոցի համար»  
ԾՐԱԳՐԻ**

1.	Ծրագրի նպատակը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի և Սուրբ Հառիճավանքի դպրատնոցի համար ձեռք բերել սարքավորումներ:
2.	Ծրագրի Բարեգործական որակման նպատակը	Օգտվել ՀՀ հայրենիքի, սուրբերեքի, պատարալիք վճարումների գծով օրենքով սահմանված պատվաբանությունից:
3.	Բարեգործը	Մուրադր Աջուր Գեղամյան քաղաք Քոյն: Անհատ բարերար
4.	Ծրագրի կատարողը	"Արման Տերտերյան, Բարեգործական հիմնադրամ ՀՎՀՀ 02631308: Ք. Երևան, Արվյան 52
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Գևորգյան հոգևոր ճեմարան և Սուրբ Հառիճավանքի դպրատնոց: Կրթական
6.	Ծրագրի բյուջեն	2.270.000ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն և ստացումը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի և Սուրբ Հառիճավանքի դպրատնոց:
8.	Տևողությունը	15.08.2015թ.ից-15.10.2015թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծախսը	Նախատեսվում է ձեռք բերել 2.270.000 ՀՀ դրամի սարքավորումներ, մատակարարում իրականացվում է՝ Ակթերեյ -ԱՌՄ, ՍՊԸ-ի կողմից ՀՎՀՀ 02622926 Ք. Երևան Բաղրայան 31 Ա թիվ 23 Պայմանագիրը կնքված 10.07.2015թ., նախատեսվում է իրականացնել մինչև 15.10.2015թ.
10.	Ձեռք բերվող ներառվող սարքանքների ու ծախսերի նկարագրությունը, կատարողի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, Ծախսերի և ստացումների գրքի կազմակերպման անվանումը, հասցեն, հեռախոսահամարը	Համակարգիչ՝ Մայր սայիկ 10հատ-1.030.000ՀՀ դրամ Մոնիտոր 10 հատ- 440.000 ՀՀ դրամ Դյուրակիր համակարգիչ 1 հատ-740.000ՀՀ դրամ Սփինկ և ստերիլիզատոր 10 հատ- 60.000 ՀՀ դրամ Ընդամուր 2.270.000 ՀՀ դրամ արժեքով առանց ԱԱՀ-ի
11.	Ծրագրի իրականացման անհրաժեշտ կազմակերպչական միջոցների անվանումը, հասցեն, հեռախոսահամարը	Այլ ծախսեր նախատեսված չեն:
12.	Հանրագրի ներառվող սարքանքների ու ծախսերի նկարագրությունը, կատարողի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, Ծախսերի և ստացումների գրքի կազմակերպման անվանումը, հասցեն, հեռախոսահամարը	Համագործակցում ենք բարերարի և հոգեբարձուների խորրոլի հետ:
13.	Ծրագրի արդյունքների նկարագրությունը, հասցեն, հեռախոսահամարը	Նախատեսում է ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքի մասին սահման տեղեկատվություն տրամադրել կատարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, բարերարին և հոգեբարձուներին խորրոլին:

4.12/5





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1067 - Ա  
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 28-ի N 07/80-2/27678-15 և սեպտեմբերի 29-ի N 06/3-3/28014-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված հուշամեդալների (429 կգ ընդհանուր քաշով, 112,477 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մյուռոն օրինության արարողության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1068 - Ա  
քաղ. երևան


ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 5)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N 07/80-2/28666-15 և հոկտեմբերի 1-ի N 06/3-3/28533-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել անհատ բարերար Նվեր Զիռանյանի միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված ծիսական գրքերի (93 կգ ընդհանուր քաշով, 300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 241 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մյուռոն օրհնության արարողության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**5 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1069 - Ա**  
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի հոկտեմբերի 2-ին)  
**քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-916-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**  
**(Հայկական կարմիր խաչի ընկերություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 5-ի N 07/80-2/29066-15 և հոկտեմբերի 1-ի N 06/3-3/28601-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքների դիմակայունության բարձրացում ՄԻԱՎ-ի և բնական աղետներին հաջորդող վարակիչ հիվանդությունների նկատմամբ» ծրագրի մասին» N Մ-916-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էդգար Փարթենրս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00104451) 2015 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բուկլետի և ձեռնարկի տպագրում՝ 763,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1070 -Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՒ 14-Ի N Մ-1109-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թվականի սեպտեմբերի 30-ի  
N 736 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի 2014 թվականի նոյեմբերի 14-ի Մայր Աթոռ Սուրբ  
Էջմիածնի կողմից իրականացվող «Հրեշտակապետաց եկեղեցու տարածքի բարեկարգում»  
ծրագրի մասին» N Մ-1109-Ա (2015 թվականի մարտի 13-ի Մ-257-Ա որոշման  
խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել  
մինչև 2015 թվականի հոկտեմբերի 15-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն:

ՆԱԽ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1071 - Ա

քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ  
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/26730-15 և սեպտեմբերի 19-ի N 06/3-3/26671-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 18-ի N ԱՄ/22.2/10823-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ամերիկայի ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից ուղարկված դեղորայքի (մեկ տեղ, 5,785.13 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 150 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Հայաստանում բնակվող սիրիահայերի համար և բաշխվելու է Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության միջոցով:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին և Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1072 - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ  
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբեր 11-ի N 07/80-2/25516-15 և սեպտեմբերի 11-ի N 06/3-3/25601-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վլադիմիր Գեորգիի Ավագյանի (անձնագիր N 72 4846802, տրված՝ 07.06.2013թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված սպորտային պարագաների (6.808.5կգ ընդհանուր քաշով, 1,081,922.76 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն:

ՆԱԽ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1073 -Ա  
քաղ. Երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ»  
ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 18-ի N 07/80-2/26511-15 և սեպտեմբերի 6-ի N 06/3-3/26619-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 18-ի N ԱՄ/22.2/10822-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Շվեյցարիայի ՍԵՄՌԱ Պյյուա հիմնադրամի կողմից Սիգալ Ինթերնեյշնլ ընկերության միջոցով «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղամիջոցը (504 կգ ընդհանուր քաշով, 31,500 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 3,363 շվեյցարական ֆրանկ, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1074 - Ա  
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵ-  
ՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 24-ի N 07/80-2/27297-15 և սեպտեմբերի 23-ի N 06/3-3/27105-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված օդափոխության, էլեկտրական և սառեցման համակարգերի սարքավորումներն ու մասերը ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և N Մ-888-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) 530 կգ ընդհանուր քաշով, 102,743.77 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 876,250 դրամ.

2) 1,882.49 կգ ընդհանուր քաշով, 3,757,046.84 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, այդ թվում 130,000 ռուսական ռուբլի կազմում են փոխադրման ծախսերը.

3) 17,650 կգ ընդհանուր քաշով, 4,390,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,528,550 դրամ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1075 - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ»  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2015 թվականի սեպտեմբերի 15-ի N 07/80-2/25669-15 և սեպտեմբերի 11-ի N 06/3-3/25637-  
15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-  
գործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի  
«Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջա-  
րարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի  
հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և N Մ-888-Ա որոշումների  
խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար  
ունեն զգալի նշանակություն՝

1) «Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00048483) 2015 թվականի օգոստոսի  
24-ին կնքված՝ N 39 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կախովի  
առաստաղի և գիպսակարտոնե առաստաղի տեղադրում՝ 15,751,172 դրամի չափով, առանց  
ավելացված արժեքի հարկի.

2) «Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00048483) 2015 թվականի օգոստոսի  
24-ին կնքված՝ N 38/Մ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է  
շինարարական նյութերի մատակարարում՝ 2,854,350 դրամի չափով, առանց ավելացված  
արժեքի հարկի:

2. Սույն որոշման հիմամբ պարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարություն:

ՆԱԽԱԳ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1076 - Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՏԱԹԵՎԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/26720-15 և սեպտեմբերի 18-ի N 6/3-3/26517-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.


1. Սահմանել, որ «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գեոտարածքնախագիծ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01556157) 2015 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N 15/05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողության իրականացում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գիզա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00851914) 2015 թվականի օգոստոսի 19-ին կնքված՝ N 0354-210815 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրանուկապատ իզոգամի ձեռքբերում՝ 539,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն.

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1077 - Ա**  
**քաղ. երևան**

**«ՖՈՔՍ ՕՆ ՉԻԼԴԻՆ ՆԱՈՒ, ԻՆԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՆԱԶՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ  
ԳՅՈՒՂՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 28-ի N 07/80-2/27675-15 և սեպտեմբերի 24-ի N 06/3-3/27342-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 29-ի N 02/14/11733-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 24-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/8443-15 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի սեպտեմբերի 24-ի N 01/21.1/1499-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**


1. Բարեգործական որակելի «Ֆոքս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Վ. Համբարձումյան 2/37, ՀՎՀՀ՝ 00130776) իրականացվող՝ 1,222,000 դրամ արժողությամբ «Մանկական խաղահրապարակ Բագրատաշեն գյուղում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Ֆոքս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մագնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2015 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղահրապարակի պատրաստում՝ 1,222,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Ֆոքս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Տավուշի Հանրապետության Տավուշի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




“Ճոքրս օն չիլորեն նաու,ինկ.” ԲԿ Հայաստանյան մեճ. կազմակերպության

Տն Արտահրապարակի կողմից


« 09 2015 թ.

Մ ա ն կ ա կ ա ն խ ա դ ա հ ր ա պ ա ր ա կ Բ ա գ ր ա տ ա շ է ն գ յ ո Վ Ր Ա Գ Ի Բ



1.	Ծրագրի նպատակը	Մանկական խաղահրապարակի տեղադրում մանկապարտեզի հարակից տարացքում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	“Ճոքրս օն չիլորեն նաու,ինկ.” Բարեգործական Կազմակերպություն, 6850 Քենդի պողոտա, սենյակ 102, Ռեսեդա, Կալիֆոռնիա 91355, Լոս Անջելես
4.	Ծրագիրը կատարողը	“Ճոքրս օն չիլորեն նաու,ինկ.” ԲԿ Հայաստանյան մեճ., ք. Երևան, Վ. Համբարձումյան 22, 37 բն, ՀՎՀՀ 00130776
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Տավուշի մարզ, Բագրատաշեն գյուղ, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	III եռ. 2015թ, 1,222,000ՀՀ դրամ առանց ԱԱՀ
7.	Բարեգործություն ստացողը	Բագրատաշեն գյուղի մանկապարտեզ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	18.09.2015թ – 30.09.2015թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1 փուլ .18.09.2015թ.-30.09.2015թ. խաղային սարքերի պատվիրում և պատրաստում, բյուջե-1,222,000դրամ 2 փուլ 01.10.2015թ-20.10.2015թ. սարքերի տեղադրում, 3 փուլ 29.10.2015թ. խաղահրապարակի հանձնումը համայնքին:
10.	Չեռք բերվող (ներումովող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Պայմանագիր 18.09.2015թ կնքված “Ճոքրս օն չիլորեն նաու,ինկ.” ԲԿ-ի , “Մագնոն” ԲԲԸ-ի միջև - խաղահրապարակի սարքավորումների արժեքը 1.222.000դրամ

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Սահմանված կարգով կներկայացվի հաշվետվություն 22 կառավարության մասին տեղական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից և վերջնական իրականացման վերաբերյալ



20.12/3



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1078 - Ա**

**քաղ. երևան**

**«ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅՎԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ  
ԳՅՈՒՂՈՒՄ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՅԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ  
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏԻՊԻ ԽՆԱՄՔ ԵՎ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 11-ի N 07/80-2/21334-15 և օգոստոսի 12-ի N 06/3-3/21542-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի օգոստոսի 7-ի N 02/14/9613-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի օգոստոսի 12-ի N ՑԲ/ԱնՄ-2-1/7118-15 ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2015 թվականի օգոստոսի 11-ի N 02/20.5/3834-15 եղակաճյուղունները, **ո Ր Ո Շ ու մ է.**


1. Բարեգործական որակել «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 867,378,171 դրամ ընդհանուր արժողությամբ «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագիրը (կցվում է):

2. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Կոտայքի մարզպետին:




Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**«Կոտայքի մարզ, Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ  
 ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն»  
 Ծ Ր Ա Գ Ի Ր**

1.	Ծրագրի նպատակը	<ul style="list-style-type: none"> <li>իրականացնել մինչև 14-15 տարեկան խնամազուրկ երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն;</li> <li>մինչև 14-15 տարեկան խնամազուրկ երեխաների համար ձևավորել հոգատար և ապահով ընտանեկան միջավայր, որը կապահովի նրանց ներդաշնակ զարգացումը և հետագա ինտեգրացումը;</li> <li>«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ստեղծում է նոր ընտանիք: Երեխաները դառնում են ՍՕՍ-ընտանիքի անդամ և ապրում են ՍՕՍ-ընտանեկան տներում, ընդ որում յուրաքանչյուր ընտանեկան տանը ապրում, խնամվում և դաստիարակվում են միջինը մինչև 7 երեխաներ: Յուրաքանչյուր ընտանեկան տուն ներառում է 4 ննջասենյակ, հյուրասենյակ, խոհանոց և ճաշասենյակ, 3 սանհանգույց՝ համապատասխան լվացարաններով և գուգարաններով, մեկ տնտեսական սենյակ և խորզանոց: Յուրաքանչյուր ՍՕՍ-ընտանիք ղեկավարվում է ՍՕՍ-մայր դաստիարակի կողմից, որն ապրում և աշխատում է այդ տանը:</li> </ul>
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտաշրջի վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից:
3.	Բարեգործը	Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերգորթի Ինտերնացիոնալ կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա)»
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8, քմ. 18-19 ):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, Հերման-Գմայների փողոց 1: ՍՕՍ Մանկական Գյուղ «Կոտայք» մասնաճյուղը գտնվում է Կոտայքի մարզի Կոտայք գյուղի կողմից անհատույց օգտագործման համար հանձնված շուրջ 6 հեկտար ընդհանուր հողատարածքի վրա: Այն բաղկացած է 13 ընտանեկան տներից, վարչա-տնտեսական և ուսումնական շինություններից: Այս բոլոր շենքերն ու շինությունները, ինչպես նաև դրանցում օգտագործվող գույքը կազմակերպության սեփականություն են և հիմնականում ձեռք են բերվել «ՍՕՍ-Կինդերգորթի Ինտերնացիոնալ կազմակերպության (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) կողմից հատկացված միջոցներով:

6.	Ծրագրի բյուջեն	Ծրագիրն առնչվում է սոցիալական բնագավառին: 2016- 2018 թվականների կտրվածքով ծրագրի տարեկան բյուջեն կկազմի մոտ 289 126 057 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն՝ I եռամսյակում 71 999 835 ՀՀ դրամ II եռամսյակում 69 301 194 ՀՀ դրամ III եռամսյակում 74 669 953 ՀՀ դրամ IV եռամսյակում 73 155 075 ՀՀ դրամ 2016-2018 թթ. ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 867 378 171 ՀՀ դրամ: Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերգորթի Ինտերնացիոնալ կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա)»
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներ են հանդիսանում ծնողական խնամքից զրկված մինչև 15 տարեկան ընդհանուր թվով 91 երեխաներ, որոնք ՍՕՍ Մանկական Գյուղ են ընդունվում տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան հանձնաժողովների որոշումների և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա: Սաների ընդունելությունն իրականացվում է տեղական համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համապատասխան որոշմամբ, աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա և հիմնականում ընդգրկվում են կամ երկողմանի, կամ միակողմանի ծնողական խնամքից զրկված երեխաներ ինչպես նաև «սոցիալապես որբացած» և լքված երեխաները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրն իրականացվելու է 2016-2018 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ):
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ընդհանուր թվով 91 երեխաների շարունակական խնամքի և դաստիարակության անընդմեջ իրականացում ՍՕՍ-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 67 883 210.26 ՀՀ դրամ; Ծախսերը կատարվում են ամսական կտրվածքով: 2. Շուրջտարյա կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների և ամառային հանգստի կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 29 479 171.60 ՀՀ դրամ, 2.1 Քիչ քիչ չեն կազմում նաև սոցիալապես որբացած և լքված երեխաները, որոնք իրենց ծնողների անտարբերության, բռնության, անտեսման կամ էլ ընտանեկան բարոյ ու խնդրված հանգամանքների բերումով է, որ հայտնվում են կացմակերպության խնամքի ներքո: Որպեսզի կարողանանք ապահովել նրանց մտավոր, հոգևոր և ֆիզիկական ներդաշնակ զարգացումը, սաների համար կազմակերպվում են նաև արտադասարանային պարապմունքներ և նախաիրությունների խմբակներ: Նախաիրությունների խմբակների , ինչպես նաև մինչ ՍՕՍ-ՄԳ ծրագրի մեջ ներգրավվելը հանրակրթական դպրոցներ չհաճախած կամ թերհաճախած երեխաների համար, ինչպես նաև հատուկ դասընթացների և առանձնահատուկ ընդունակություններ ունեցող երեխաների արտադասարանային



պարապմունքների կազմակերպում և ուսումնական հաստատություններում վճարովի հոսքերում սովորողների ուսման վարձեր (մասնագետների վարձավճար, անհրաժեշտ պարագաների և նյութերի ձեռքբերում)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 9 982 171.60 ՀՀ դրամ;

2.2. մարզա-մշակութային միջոցառումներ, մարզական խաղեր, օլիմպիադաներ, մրցաշարեր, համերգներ, քատերական և կրկեսային ներկայացումներ, էքսկուրսիաներ, մանկական դիսկոտեկներ, ազգային ավանդական և միջազգային տոնական միջոցառումներ, յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 259 000 ՀՀ դրամ;

2.3. 91 երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարային և առողջարանային համալիրներում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 17 238 000 ՀՀ դրամ;

*կազմակերպությունը չունի սեփական ճամբարային կամ առողջարանային համալիրներ և ամառային արձակուրդների շրջանում երեխաների հանգիստը առավել բովանդակալից անցկացնելու և իրենց հետակալիցների հետ ինտեգրվելու նպատակով կազմակերպությունը նրանց ճամբարային ծրագիրը կազմակերպում է գործող որևէ ճամբարային համալիրում և ըստ կերպած պայմանագրերի՝ կատարում է բոլոր համապատասխան վճարումները: Առողջական խնդիրներ ունեցող երեխաներին կազմակերպությունը տանում է համապատասխան առողջարանային համալիրներ և դարձյալ կատարում է բոլոր վճարումները:*

Կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով, իսկ ամառային հանգիստը կազմակերպվում է հուլիս, օգոստոս ամիսներին:

3. Շուրջտարյա առաջնային առողջության պահպանում, բուժապատրվման ապահովում և հոգեբանական աջակցություն երեխաներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 3 900 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;

3.1 երեխաների առաջնային առողջության պահպանում, և բուժապատասխանման ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 500 000 ՀՀ դրամ;

3.2 հոգեբանական աջակցություն երեխաներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 2 400 000 ՀՀ դրամ;

4. Կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 16 210 574 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;

5. Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 11 310 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում է ըստ անհրաժեշտության;

6. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 104 572 274 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;

6.1 ՍՕՍ-մայր դաստիարակներ՝ 57 873 678 ՀՀ դրամ; թվով 13 աշխատակից

6.2 ՍՕՍ-մայր դաստիարակների օգնականներ՝ 21 048 682 ՀՀ դրամ; թվով 12 աշխատակից

4/12/14

6.3 մանկավարժական և թժկական անձնակազմ՝ 21 664 632 ՀՀ դրամ; թվով 6 աշխատակից

6.4 դպրոցական ավտոբուսի վարորդ՝ 3 985 282 ՀՀ դրամ; թվով 1 աշխատակից

7. Կազմակերպական ծախսերը կազմում են մոտ 55 770 827 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով:

10. Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների գնումները, ծախսերի և անստանդարտ նկարագիրը, ծավալները և անստանդարտ գինը



Երեխաները խնամքն ու դաստիարակությունն իրականացնելու համար կազմակերպությունը տրամադրում է ամսեկան ընտանեկան բյուջե, որը ներառում է նրանց սննդի, հիգիենայի պարագաների, լվացող նյութերի, հագուստի, դպրոցական և գրպանի ծախսերի, ինչպես նաև մանր փոխանակումների գումարները: Մանր փոխանակումները, որպես առանձին ծախսերի հոդված, ներառում է տարբեր տեսակի կենցաղային պիտույքների և պարագաների փոխարինում (ափսեներ, բաժակներ, էլեկտրական լամպեր, արդուկ, արդուկի սեղան, սրբիչներ, ինչպես նաև կենցաղային այլևայլ պարագաներ)՝ դրանց մաշվածության, շարքից դուրս գալու և այլևս պիտանի չլինելու դեպքում:

Յուրաքանչյուր նոր երեխա ընդունելիս կազմակերպությունը միանվագ հատկացնում է գումար (տես. «նոր երեխայի մուտքի գումար»)՝ նրանց համար հագուստ և առաջին անհրաժեշտության այլ պարագաներ ձեռք բերելու համար:

1. Ընդհանուր թվով 91 երեխաների խնամքի և դաստիարակության իրականացում ՍՕՍ-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 67 883 210.26 ՀՀ դրամ, այդ թվում՝

- 1.1. սնունդ՝ 30 626 400 ՀՀ դրամ
- 1.2. վագոտ նյութեր և հիգիենայի պարագաներ՝ 3 175 440 ՀՀ դրամ
- 1.3. հագուստ և կոշիկ՝ 12 858 640 ՀՀ դրամ
- 1.4. դպրոցական ծախսեր՝ 5 730 480 ՀՀ դրամ
- 1.5. գրպանի գումար՝ 2 547 720 ՀՀ դրամ
- 1.6. այլ ընտանեկան ծախսեր՝ 11 349 620 ՀՀ դրամ
- 1.7. առանց ծախսերը հիմնավորող փաստաթղթի ձեռքբերումների եկամտային հարկ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 594 910.26 ՀՀ դրամ

2. 91 երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարային և առողջարանային համալիրներում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 17 238 000 ՀՀ դրամ

3. Կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 16 210 574 ՀՀ դրամ, այդ թվում՝

- 3.1. ջրամատակարարման վարձավճար՝ 300 000 ՀՀ դրամ;
- 3.2. էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 8 691 942 ՀՀ դրամ;
- 3.3. գազամատակարարման վարձավճար՝ 6 331 350 ՀՀ դրամ;
- 3.4. աղբահանության վարձավճար՝ 424 800 ՀՀ դրամ;
- 3.5. տեղական հարկեր՝ 462 482 ՀՀ դրամ;

4. Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 11 310 000 ՀՀ դրամ, այդ թվում՝


4.1. մանկական գյուղի տարածքի և շինությունների (ընտանեկան տներ, ոռոգման,

4/12/14

	<p>էկելտրասնուցման, գազամատակարարման և ջրամատակարարման համակարգեր) վերանորոգում, պահպանում՝ և արդիականացում, գործիքների և պարագաների ձեռք բերում՝ 7 040 000 ՀՀ դրամ;</p> <p>4.2. կահույքի ձեռք բերում և վերանորոգում՝ 820 000 ՀՀ դրամ;</p> <p>4.3. էկելտրակա սարքավորումների՝ սառնարանների, գազօջախների, փոշեկոլների, լվացքի մեքենաների, համակարգիչների, համակարգչային ծրագրերի ձեռք բերում և վերանորոգում՝ 3 450 000 ՀՀ դրամ;</p> <p>5. հանրային կապեր և ներկայացուցչական ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 870 000 ՀՀ դրամ, այդ թվում՝</p> <p>5.1. ներկայացուցչական ծախսեր 500 000 ՀՀ դրամ;</p> <p>5.2. ֆիլմեր և լուսանկարներ 60 000 ՀՀ դրամ;</p> <p>5.3. գովազդային նյութեր և տպագրություններ 110 000 ՀՀ դրամ;</p> <p>5.4. արտաքին միջոցառումներ 200 000 ՀՀ դրամ;</p> <p>6. աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 000 000 ՀՀ դրամ;</p> <p>7. հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաներ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 990 000 ՀՀ դրամ, այդ թվում՝</p> <p>7.1. հեռախոսի վարձավճար 1 016 000 ՀՀ դրամ;</p> <p>7.2. ինտերնետի վարձավճար 684 000 ՀՀ դրամ;</p> <p>7.3. փոստային առաքումների վարձավճար 450 000 ՀՀ դրամ;</p> <p>7.4. գրասենյակային պարագաներ և նյութեր 840 000 ՀՀ դրամ;</p> <p>8. տրանսպորտային միջոցների (ՎԱԶ 212300-55L ՇԵՎՐՈՒԼԵ-ՆԻՎԱ, MITSUBISHI մարդատար մեքենաներ, Mistubishi մակնիշի միկրոավտոբուս, HYUNDAY մակնիշի ավտոբուս) նորոգում, սպասարկում, շահագործում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 799 950 ՀՀ դրամ:</p>
<p>11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</p>	<p>Կազմակերպական ծախսերը 2016-2018 թվականներից յուրաքանչյուրի համար կազմում են մոտ 55 770 827 ՀՀ դրամ, որոնք համապատասխանաբար կազմում են 2016-2018 թվականների տարեկան բյուջեի 19.29 տոկոսը :</p> <p>Այդ թվում՝</p> <p>1. հանրային կապեր և ներկայացուցչական ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 870 000 ՀՀ դրամ;</p> <p>2. աշխատակազմի ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 43 600 877 ՀՀ դրամ, ընդ որում՝</p> <p>2.1. աշխատավարձ (վարչական և սպասարկող անձնակազմ) և կենսաթոշակի անցած UOU-մայր դաստիարակի հավելավճար(վճարվում է համաձայն ներքին կանոնակարգի)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 38 873 477 ՀՀ դրամ;</p> <p>2.2. աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 000 000 ՀՀ դրամ;</p> <p>2.3. UOU-մայր դաստիարակների և նրանց օգնականների մասնագիտական սուպերվիզիա՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 401 400 ՀՀ դրամ;</p>

12/4

	<p>2.4. աշխատակիցների բուժապասարկման և պարտադիր բժշկական զննության ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 326 000 ՀՀ դրամ</p> <p>3. հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաներ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 990 000 ՀՀ դրամ;</p> <p>4. այլ ընթացիկ և չնախատեսված ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 598 000 ՀՀ դրամ, ընդ որում՝</p> <p>4.1. ապահովագրություն՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 126 000 ՀՀ դրամ,</p> <p>4.2. քանկային, չնախատեսված վարչական և ընթացիկ ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 472 000 ՀՀ դրամ,</p> <p>5. տրանսպորտային միջոցների (ՎԱԶ 212300-55L ՇԵՎՐՈՒԼԵ-ՆԻՎԱ, MITSUBISHI մարդատար մեքենաներ, Mistubishi մակնիշի միկրոավտոբուս, HYUNDAY մակնիշի ավտոբուս) նորոգում, սպասարկում, շահագործում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 799 950 ՀՀ դրամ,</p> <p>6. աշխատակիցների գործուղման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 512 000 ՀՀ դրամ;</p> <p>7. տրանսպորտային ծախսերի փոխհատուցում և տրանսպորտային միջոցների վարձակալություն՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 400 000 ՀՀ դրամ;</p>
<p>12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ:</p>
<p>13. Ծրագրի արդյունավետության վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերական ստուգայցերի, ինչպես նաև ֆինանսատնտեսական և հոգեբանա-մակավարժական գործունեության աուդիտների իրականացման միջոցով:</p> <p>Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության արեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</p>



Handwritten signature and scribbles.

Ա. Քոչարյան

12/4



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1079 -Ա  
քաղ. Երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ»  
ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 28-ի N 07/80-2/27896-15 և սեպտեմբերի 29-ի N 06/3-3/28017-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N ԱՄ/22.2/11117-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի Էլեոնորեն հիմնադրամ-Յյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոցի կողմից Սոնովա ԱԳ ընկերության միջոցով «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված 39 հատ լսողական սարքերը և 300 հատ մարտկոցները (11,200 կգ ընդհանուր քաշով, 810 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 310.8 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1080 - Ա**

**քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-857-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/80-2/28121-15 և հոկտեմբերի 1-ի N 06/3-3/28429-15 եզրակացությունները, որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն-2015» ծրագրի մասին» N Մ-857-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետը լրացնել «Նախատեսվում է նաև անհրաժեշտ նյութերը տպագրելու և բազմացնելու համար համապատասխան սարքավորումների ներմուծում՝ 8,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի մոտավոր արժեքով» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ձեռք բերված գունավոր տպագրության սարքը ու մասերը (մեկ տեղ, 156 կգ ընդհանուր քաշով, 7,370 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 171,288 դրամ, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**5 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1081 -Ա  
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի հոկտեմբերի 2-ի նիստին)  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ»  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 5-ի N 07/80-2/29060-15 և սեպտեմբերի 29-ի N 06/3-3/28177-15 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և N Մ-888-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էներգոսիստեմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01252685) 2015 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված՝ N 40 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրամոնտաժային աշխատանքների իրականացում՝ 31,611,912 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2015 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված՝ N 114-Լ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պորտլանդցեմենտի մատակարարում՝ 4,480,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Այս որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԿԱՐԱԿՆԵՐ  
  


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**2 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1082 - Ա**  
**քաղ. երևան**

**«ՀԱՅ ԿԱՆԱՅՔ ՀԱՆՈՒՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԾՐՋԱԿԱ  
ՄԻՋԱՎԱՅՐԻ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ «ԴԻՏԱԿ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ  
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 22-ի N 07/80-2/26913-15 և N 06/3-3/26859-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 24-ի N 02/14/11504-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 24-ի N 03/07-1/11137-15, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 05/23/5472-15 և Հայաստանի Հանրապետության Արարարի մարզպետարանի 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1/3/1-1/4625-15 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 143,913 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Դիտակ գյուղի դպրոցի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝ 02550261) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ա.Ռ.Մ.Ե. - ֆիրմա» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 03800484) 2015 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված՝ N ԿՆ-01/09.15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 39,345,045 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ա.Ռ.Մ.Ե. - ֆիրմա» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 03800484) 2015 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված՝ N ԿՆ-02/09.15 պայմանագրում նշված


գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 25,555,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարած աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արարարի մարզպետարան:



**Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Հաստատված է  
 «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ նախագահ Ելենա Մանվելյան  
 17 սեպտեմբերի 2015թ.


«Դիտակ գյուղի դպրոցի վերանորոգում»

ՄՐԱԳԻՐ


12/7

1	Օրագրի նպատակը	Օժանդակել ՀՀ Արարատի մարզի Դիտակ գյուղի միջնակարգ դպրոցի վերանորոգմանը:
2	Օրագրի բարեգործական որակման նպատակը	Օրագրի շրջանակում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3	Բարեգործը	Հայաստանում Ճապոնիայի դեսպանատուն և «Սուդիդ լը Ավենիդ» հիմնադրամ (Sourire vers l'Avenir Foundation)
4	Օրագիրը կատարողը	«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ (ՀՀ, քաղ. Երևան, 0019, Բաղրամյան պող. 24բ, ՀՎՀՀ՝ 02550261):
5	Օրագրի իրականացման վայրը և ընագավառը	ՀՀ Արարատի մարզ, գյուղ Դիտակ, դպրոցաշինություն/կրթական:
6	Օրագրի բյուջեն	Օրագրի ընդհանուր արժեքը կազմում է 143,913.00 (մեկ հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր տասներեք) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, հետևյալ համամասնությամբ՝ Հայաստանում Ճապոնիայի դեսպանատուն՝ 88,113.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և «Սուդիդ լը Ավենիդ» հիմնադրամ (Sourire vers l'Avenir Foundation) 55,800.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	ՀՀ Արարատի մարզի Դիտակ համայնքը, մասնավորապես, Դիտակ գյուղի Նվեր Սարգսյանի անվան միջնակարգ դպրոցը:
8	Օրագրի իրականացման տևողությունը	Օրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ. օգոստոսի 25-ից մինչև 2016թ. օգոստոսի 25-ը:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Օրագրով նախատեսվում է 2015թ. օգոստոսի 25-ից մինչև 2016թ. օգոստոսի 25-ը կատարել 143,913.00 (մեկ հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր տասներեք) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ աշխատանքներ, ներառյալ՝ դպրոցի վերանորոգման աշխատանքներ, այդ աշխատանքների ընթացքի տեխնիկական հսկողություն, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից մշտադիտարկում և անկախ աուդիտի իրականացում:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ	Վերանորոգման աշխատանքների իրականացման համար պայմանագրեր են կնքվել «Ա. Ռ. Մ. Ե. - ֆիրմա» արտադրական կոդավերատիվի հետ՝ դպրոցի

	նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	ապամոնտաժման, վերակառուցման և հարդարման, էլեկտրամոնտաժային աշխատանքների կատարման, դպրոցի բակի ձախակողմյան և աջակողմյան տարածքների բարեկարգման համար, ներառյալ՝ հին քայքայված սալվածքի մնացորդների քանդում և հեռացում, հողային աշխատանքներ (հարթեցում), նոր սալվածքի կառուցում ամբողջ շենքի շուրջ, դպրոցի բակի մոտավորապես 200 քառ.մ տարածքի սալիկապատում՝ ջրահեռացման բարելավման նպատակով, դպրոցի ետնամասի ցանկապատում, ջրահեռացման համակարգի ստեղծում, դպրոցի հիմնական մասնաշենքի կողային և ետևի պատերի սվաղում և ներկում: Վերը նշված պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմում է 64,900,045.00 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Նախատեսվում է վերանորոգման աշխատանքների ընթացքի տեխնիկական հսկողություն՝ 2,500.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի և անկախ աուդիտի իրականացում՝ 1,500.00 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
11	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Օրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կազմակերպական ծախսեր աշխատավարձի տեսքով՝ 1,5000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ մշտադիտարկում իրականացնելու համար:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ Արարատի մարզպետարանի և Դիտակի գյուղապետարանի, ինչպես նաև դեղոր կազմակերպությունների հետ:
13	Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից մշտադիտարկման, վերանորոգման աշխատանքների անկախ տեխնիկական հսկողության, անկախ աուդիտի իրականացման, ինչպես նաև սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, Հայաստանում Ճապոնիայի դեսպանատանը և «Սուդիդ լը Ավենիդ» հիմնադրամին հաշվետվությունների ներկայացման միջոցով:



«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ նախագահ Ելենա Մանվելյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1083 - Ա  
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի հոկտեմբերի 2-ի նիստին)  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս. Վ. ՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱՔՈՒԺԱԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ  
ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N 07/80-2/28664-15 և հոկտեմբերի 5-ի N 06/3-3/28965-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N ԱՄ/22.2/11277-15 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նառիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալյանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բերի (դեղ, ներարկիչներ, ասեղներ, հիվանդին հետազոտելու համար օրագրեր՝ 2 տեղ, 81 կգ ընդհանուր քաշով, 3,435.50 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

Ներմուծվող դեղը, ներարկիչները, ասեղները և հիվանդին հետազոտելու համար օրագրերը նախատեսված են քրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալյանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բերի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱՐԱՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

7-ին կիցված՝  
ավանդի սեպ-  
տեմբերի 2015  
մատուցում  
2-ին կիցված՝  
ավանդի սեպ-  
տեմբերի 2015  
մատուցում  
1-ին կիցված՝  
ավանդի սեպ-  
տեմբերի 2015  
մատուցում  
90,000  
կայանների  
կամ 2015  
համանվազ-  
մների մա-  
տուցում  
նոյեմբերի 9-ին  
կամ 2015  
համանվազ-  
մները կապի  
ի հարկի.  
պրիմի 1-ին  
ամ 2015  
տնայնապա-  
րի մատու-  
ցում  
հոկտեմբերի 1-ին  
2015 թվա-  
կանից  
հոգստա-  
րեցվում է  
ստորակով՝  
ու կազմա-  
երում մա-  
պատմեն-  
կան ծրա-



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**02 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1084 -Ա**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՅ ԻՐԱՎԱՆԱՅՈՂ «ՁԵՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱՆԱՅՈՒՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 07/80-2/27452-15 և սեպտեմբերի 3-ի N 06/3-3/24289-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 24-ի N 02/14/11502-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N 04/07-1/10266-15 ու Հայաստանի Հանրապետության տրանսպորտի կառավարման և արդակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 9-ի N 1/02.3/13073-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, առաջին Եկմայան 6, ՀՎՀՀ՝ 01559706) 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը իրականացվող՝ 107,323,008 դրամ ընդհանուր արժեքով, «Ձեռնարկատիրական և քաղաքացիական կրթության իրականացում» բարեգործական կրթական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի սեպտեմբերի 2-ին կնքված՝ N 008/117575807 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում Սյունիքի մարզային գրասենյակի «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 90,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2011 թվականի մայիսի 18-ին կնքված՝ N 145521 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 720,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2014 թվականի օգոստոսի 2-ին կնքված՝ N 7053347 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում Երևանի գրասենյակի «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ 90,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

